

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

«ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝ Գնահատումը որպես սովորողի
առաջընթացի կարևոր խթան**

Ուսուցիչ՝ Սիլվա Գրիգորյան

ԵՐԵՎԱՆ 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատումը տեղեկատվություն ստանալու, հավաքելու, վերլուծելու և դրա հիման վրա հանրակրթության բովանդակային և կազմակերպչական աշխատանքների արդյունքները ի մի բերելու և վերահսկելու գործընթաց է:

Գնահատման հիմնական նպատակը սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման և տիրապետման աստիճանի, նրանց անձնային որակների ստուգումն է:

Գնահատումը պետք է լինի հուսալի, հավաստի, արդյունավետ և օգտակար:

Գնահատումն անհրաժեշտ է կրթության որակը բարելավելու, յուրաքանչյուր սովորողի ուսումնական գործունեությունը խթանելու, ակտիվացնելու և շարունակաբար զարգացնելու համար:

Գոյություն ունի գնահատման 2 հիմնական տեսակ՝ ամփոփիչ գնահատում և ձևավորող գնահատում:

Ամփոփիչ գնահատման նպատակն է աշակերտի առաջադիմության գնահատումը ժամանակի մի որոշակի հատվածում և գրանցելու ու հրապարակելու առաջադիմության առկա մակարդակը: Ձևավորող գնահատման նպատակն է ստուգել աշակերտի յուրացման մակարդակը ժամանակի որոշակի հատվածում, որպեսզի տեղեկություն ստանանաք այն մասին, թե ինչպես կատարելագործենք նրա կողմից նյութի յուրացումը:

Գնահատման հիմնական սկզբունքներն են

- օբյեկտիվություն
- հուսալիություն
- անկողմնակալություն
- հավաստիություն
- հիմնավորվածություն
- մատչելիություն
- թափանցիկություն
- գնահատում՝ հիմնվելով դրական արդյունքի վրա

Գնահատման հիմնական գործառություններն են

- ստուգող
- ուսուցանող
- ուղղորդող
- դաստիարակող
- զարգացնող

Գնահատում, գնահատման տեսակները

Նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները կիրառում են տարբեր անհատական մոտեցումներ (խրախուսում, ոգևորում). Եթեխաների գիտելիքները, կարողություններն ու հմտությունները այլ կերպ չեն գնահատվում:

Հանրակրթական և հատուկ ուսումնական հաստատություններում կիրառվում է գնահատում, որը հանդիսանում է ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց:

Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցի կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը:

Գնահատման հիմնական նպատակը սվորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումը և դրա հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործման, ուսման որակի վերահսկումն է: Այն նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը :

Սովորողների առաջադիմության ընթացիկ գնահատման համակարգը բաղկացած է 2 իրար փոխլրացնող ձևերից՝

ա) ուսուցանող կամ ձևավորող գնահատում, որն իրականացվում է առանց գնահատականը գրանցելու և սովորաբար ուղեկցվում է ուսումնական առաջադրանքի կատարման կամ նյութի յուրացման վերաբերյալ ուսուցչի կողմից սովորողին արված առաջարկով, դիտողություններով կամ մեկնաբանություններով:

բ) ամփոփիչ միավորային գնահատում, եթե ստուգվում է սովորողի կողմից ամբողջական թեմայի յուրացման աստիճանը: Վերջինս իրականացվում է տվյալ ուսումնական նյութն ավարտելուց հետո և ունի վերահսկող դեր:

Ուսուցանող գնահատում

Ուսուցանող գնահատումը կատարվում է ուսումնական նյութի յուրացման ընթացքում, այն հետապնդում է սովորողի առաջադիմության բարձրացման և կրթության որակի բարելավման նպատակ: Ուսուցանող գնահատման մեջ շրջափուլը կարելի է ներկայացնել այսպես:

գնահատում / դպրոցում / ուսումնառություն / ուսուցանող գնահատում / հետադարձ կառ / բարելաված ուսուցում

Ուսուցանող գնահատումը ուսուցչին հնարավորություն է տալիս պարզել ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի, խմբի, դասարանի

ձեռքբերումները, դժվարությունները, բացքողումները և իրավիճակի վերլուծությունից հետո մշակել գործողությունների հետագա քայլերը՝ յուրաքանչյուր սովորողի կամ դասարանի ընթացիկ առաջադիմությունը բարելավելու համար։ Գնահատման այս ձևում կարևորվում է հետադարձ կապի առկայությունը։ Հետադարձ կապը մեկնարանությունների, վերլուծությունների միջոցով պետք է հանգեցնի դասավանդման ընթացքում առաջացած թերությունների շտկման գործողությունների թե՛ սովորողի և թե՛ ուսուցչի համար։ Այս դեպքում սովորողը համեմատվում է հիմնականում ինքն իր հետ՝ պարզելով իր առաջընթացը։

Ուսուցանող գնահատման նպատակով երաշխավորվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝

- ✓ բանավոր հարցում
- ✓ գրավոր աշխատանք տանը և դպրոցում
- ✓ ինքնուրույն աշխատանք
- ✓ բաց հարցերով քննարկում
- ✓ ինքնագնահատում և փոխադարձ գնահատում
- ✓ խմբային աշխատանք

Ամփոփիչ գնահատում

Ընթացիկ առաջադիմության արդյունքները բացահայտելու համար գործածության երաշխավորվող 4 տեսակներից (բանավոր հարցում, գործնական աշխատանք, թեմատիկ գրավոր աշխատանք, կիսամյակային ամփոփիչ աշխատանք) յուրաքանչյուրը հնարավորություն է տալիս ստուգելու սովորողի, խմբի, դասարանի և դպրոցի կողմից հանրակրթական պետական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի պահանջների կատարման ընթացքը, յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքների, կարողությունների ու հմտությունների փաստացի վիճակը, նրա արժեքային որակները։

Բանավոր հարցում. Բանավոր հարցման միջոցով պարզվում են սովորողի ձեռքբերումները հետևյալ ուղղություններով՝ բանավոր խոսք, վերաբերություն, հաղորդակցություն, համագործակցություն, լեզվամտածողություն, գիտելիք յուրացում, սրամաբանություն, ստեղծագործական մտածողություն։

Չորքնական աշխատանք. Ուսումնական ծրագրով նախատեսված տարրեր տիպի և բնույթի գործնական առաջադրանքներ, որոնք պետք է գնահատվեն։

Թեմատիկ գրավոր աշխատանք. Յուրաքանչյուր թեմայից սովորողի ձեռքբերումները բացահայտելու համար նախատեսված է ծավալուն գրավոր աշխատանք։ Այն պետք է կազմված լինի տվյալ թեմայից սովորողին ներկայացվող առարկայական չափորոշչային պահանջների յուրացման աստիճանը ստուգող առաջադրանքներից։

Կիսամյակային ամփոփիչ աշխատանք. Կիրառվում է ուսումնական կիսամյակի վերջում, ամբողջ ծրագրային նյութն ուսումնասիրելուց հետո: Կարող է կիրառվել բանավոր կամ գրավոր տարբերակը:

Թեստը որպես չափման գործիք

Որպեսզի գնահատենք աշակերտին կամ ցանկացած անձի որևէ գործունեություն, հարկավոր է, որ մենք չափենք այն: Դրա համար նախ պետք է որոշենք, թե ինչ ենք չափում, ինչու ենք չափում, ինչպես ենք չափում:

<< Չափումը >> գնահատականի թվանշային արտահայտությունն է, թվերի համակարգված վերագրումը անհատին կամ անհատի գործունեության արդյունքին:

Ուսումնառության գործընթացում թեստի կիրառումը հանդիսանում է սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման և չափման գործիք: Թեստային ստուգումն ունի մի շարք առավելություններ.

- ✓ Հնարավորություն է տալիս ուսուցչին փոքր չափաբժիններով ստուգել մեծածավալ ուսումնական նյութ
- ✓ Արագ գնահատել մեծ թվով սովորողների ուսումնական նյութի յուրացման աստիճանը
- ✓ Նվազեցնում է սուբյեկտիվ գործոնի աստիճանը

Թեստը խնամքով ընտրված ուղղորդող ցուցումներով առաջադրանքների շարք է աշակերտներին գնահատելու և ուսման արդյունքը արժեորելու նպատակով: Թեստը կարող է բաղկացած լինել 1 կամ մի քանի առաջադրանքներից, որոնք ել իրենց հերթին՝ տարբեր հարցերից ու կետերից: Յուրաքանչյուր կետ բացահայտում է տվյալ առաջադրանքը կատարողի ունակություններն ու հմտությունները: Շատ կարևոր է, որ թեստում պահանջը ձևակերպվի պարզ, հստակ և միանշանակ:

Թեստի տեսակները

Կախված թեստի նպատակից տարրերսկում ենք թեստի հետեւյալ տեսակները՝ ձևավորող, հայտորոշիչ և ամփոփիչ:

Զեավորող թեստերը հիմնականում նպատակ ունեն խթանել և օգնել սովորողին բարելավելու իր առաջադիմությունը: Դրանք հնարավորություն են տալիս ուսուցչին պարզել ինչպես յուրաքանչյուր սովորողի, այնպես էլ ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարություններն ու բացթողումները՝ ապահովելով հետադարձ կապը: Քանի որ այս թեստերի անցկացման նպատակը գիտելիքի հաղորդումն ու ամրապնդումն է, դրանք անցկացվում

են դասավանդման ժամանակ նյութի մատուցման ու ամրապնդման փուլերում և այլ կերպ կոչվում են ուսուցանող: Զնավորող թեստի համար նպատակահարմար են առաջադրանքների գրեթե բոլոր տեսակները՝ տնային աշխատանք, բանավոր հարցում, խմբային աշխատանք, բաց հարցերով քննարկում, դերային խաղեր և այլն:

Հարցերը պետք է լինեն ուսուցանող բնույթի: Աշակերտի ցանկացած պատասխան ընդունելի է: Անզամ եթե այն չի գոհացնում ուսուցչին, միևնույն է, ուսուցիչն արժնորում է այն: Սովորողի պատասխանին ուսուցչի արձագանքը չի կարող լինել <<այո>> կամ <<ոչ>>, այն պետք է ուղեկցվի մեկնաբանություններով, այսինքն ուսուցանող լինի:

Հայտորոշիչ թեստը ձևավորող թեստի մի տեսակ է, որն անցկացվում է ուսումնառության սկզբում կամ ընթացքում, սովորողի թույլ կողմերը հայտնաբերելու, ուսուցումը բարելավելու համար: Հայտորոշիչ թեստերը լինելով ընթացիկ ստուգման ձև, հաճախ անցկացվում են նոր թեմա անցնելուց առաջ՝ սովորողի նախնական իրազեկության աստիճանը պարզելու և դրա հիման վրա նյութի ուսուցումը կազմակերպելու համար: Այս թեստի հիմնական նպատակը ոչ թե զնահատումն է, այլ յուրաքանչյուր սովորողի կողմից նյութի յուրացման աստիճանի պարզումը, նյութը չյուրացրած սովորողների բացահայտումը՝ նրանց կրթությունը բարելավելու նպատակով:

Հայտորոշիչ թեստի կարևոր առանձնահատկություններն են՝

- Ստուգում են մեկ հիմնական գիտելիք
- Թեստի հարցերը ձևակերպվում են կարճ, պարզ, մատչելի
- Թեստի տևողությունը կարծ է՝ 7-20 րոպե
- Արդյունքները պետք է վերլուծվեն ոչ ուշ, քան հաջորդ դասին
- Սովորողների մեծ մասի կողմից թեստը հեշտությամբ պիտի հաղթահարվի

Ամփոփիչ թեստը ի տարբերություն ձևավորող և հայտորոշիչ թեստերի հիմնականում ստուգողական բնույթի է: Հանրակրթական դպրոցում ամփոփիչ թեստերն անցկացվում են՝

- Մի քանի թեմաներ ստուգելու և ամփոփելու նպատակով
- Կիսամյակ կամ տարի ամփոփելու նպատակով
- Ընտրության նպատակով/ օլիմպիադա, միասնական քննություն
- Վկայականի շնորհման նպատակով

Ուստի ամփոփիչ թեստերը ենթադրում են ավելի լայն ու խորը գիտելիքների ստուգում, առաջադրանքների տեսակների բազմազանություն, թեստի անցկացման ավելի երկար ժամանակ:

Քանի որ ամփոփիչ թեստերի հիմնական նպատակը տվյալ առարկայից սովորողի ծրագրային նյութին տիրապետելու մակարդակի ձշումն ու գնահատումն է, դրանց առաջադրանքներն ու հարցերը պետք է կազմվեն առանձնակի ուշադրությամբ ու խնամքով: Դա նշանակում է, որ թեստ կազմելիս պետք է ապահովվեն թեստի հուսալիությունը, արդյունավետությունն ու հավաստիությունը:

Հուսալի նշանակում է ստուգման արդյունքում գրանցված գնահատականի հարաբերական կայունություն: Այսինքն թեստի ստուգման արդյունքները պետք է փոփոխական չինեն:

Արդյունավետ է համարվում այն թեստը, որը հաջողությամբ չափում է ստուգվողի գիտելիքների մակարդակը, հմտությունների սահմանը: Արդյունավետ թեստ նշանակում է նվազագույն առաջադրանքների քանակով և ժամանակի ծախսով առավելագույն արդյունք ապահովել: Բովանդակային տեսակետից արդյունավետ է այն թեստը, որն ընդգրկում է ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական կարևոր նյութը:

Հավաստի նշանակում է, որ թեստի արդյունքները պետք է վավերական լինեն, այսինքն՝ ներկայացնեն սովորողի այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք նախատեսված էին ստուգել: Այլ կերպ ասած, թեստի հավաստիությունը իր նպատակին ճիշտ ծառայելն է: Հավաստի թեստն ապահովում է կոնկրետ ն հասնելու հաջողությունները:

Թեստի կառուցման կանոնները

Նախքան թեստը գրելը հարկավոր է պատասխանել հետևյալ հարցերին

- Ու՞մ եմ թեստավորում:
- Ինչո՞ւ եմ թեստավորում:
- Ե՞րբ եմ թեստավորում:
- Ի՞նչ հմտություններ եմ ստուգում:
- Քանի՞ առաջադրանք եմ տալիս:
- Ինչպիսի հարցեր եմ ընդգրկում:
- Բարդության աստիճանը ինչպիսի՞ն է:
- Հարցերի կշիռը ինչպիսի՞ն է:
- Ինչպե՞ս բաշխել միավորները :
- Ինչպե՞ս գնահատել:
- Ինչպե՞ս արժենորել:
- Որքա՞ն ժամանակ հատկացնել:

Ինչպես ապահովել թեստի դրական արդյունքը բոլոր աշակերտների համար

- Կարդալ թեստը բարձրածայն

- Բացատրել այլ նախադասություններով
- Խնդրել, որ աշակերտները կրկնեն
- Ապահովել ժամացույցի առկայությունը ժամանակի վերահսկման համար
- Տեսանելիորեն ցույց տալ խնդիրը
- Տալ ընտրության հնարավորություն
- Գնալ կոնկրետից դեպի վերացականը
- Թույլ տալ աշակերտներին օգտվել գրառումներից
- Աշակերտի լրացնելուց հետո անմիջապես անդրադառնալ նրա աշխատանքին
- Հարցերի յուրաքանչյուր խմբի համար հաշվարկել միասնական միավոր արժեք

Գնահատման սանդղակներ

Գնահատման սանդղակները հնարավորություն են տալիս պարզելու, թե աշակերտն ինչ գիտի և ինչ կարող է անել, միևնույն ժամանակ դրանք տեղեկատվության կարևոր աղբյուր են ուսուցիչների, ծնողների համար։ Սանդղակը գնահատման ձև է, որը սյունակաշարերի միջոցով համադրում է սովորողների ըմբռնման որակը, հմտության աստիճանների տարբերակման չափանիշները և առաջարրանքների կատարման որակը։

Սյունակաշարերը որպես գնահատման ձև, բավականին առավելություններ ունեն

առավելություններ ունեն: Թվարկենք դրանք՝

1. Սանդղակը գնահատման հնար է, որն օգնում է ուսուցի և աշակերտի փոխհամաձայնեցմամբ կենտրոնանալ կոնկրետ հարցերի վրա։
2. Սանդղակը կազմվում է այնպես, աշակերտը առաջարրանքը կատարելով ստանա որոշակի տեղեկություններ իր ուսումնառության մասին։
3. Սանդղակն օգնում է աշակերտին հասկանալ գնահատականի իմաստը՝
 - հստակ պատկերացում է տալիս տվյալ գնահատականի համար պահանջվող աշխատանքի մակարդակի մասին
 - մատնանշում է թերություններ, որոնք կարելի է վերացնել
 - ընդգծում է բացթողումները, որոնց ուղղությամբ պետք է հետևողական աշխատանք կատարել
 - օգնում է լավ յուրացրած գիտելիքները տարբերել թերի գիտելիքներից
4. սանդղակն ուսուցչին հնարավորություն է տալիս ճիշտ գնահատել աշակերտի աշխատանքը

2. Դասավանդման նպատակը

Մենք չենք կարող ուսուցչի գործողությունները գնահատել, եթե չգիտենք նրա նպատակը: Մենք չենք կարող ուսուցման գործընթացը իմաստավորված կերպով քննարկել, քանի դեռ որոշակի համաձայնության չենք եկել այն բանի շուրջ, թե ո՞րն է դասավանդման նպատակը:

Ուզում եմ ավելի կոնկրետ լինել: Ես այստեղ նկատի ունեմ միջին դպրոցի դասընթացի ծավալով մաթեմատիկայի դասավանդումը և «հնատարագ» գաղափարն այն մասին, թե ինչպիսին պետք է լինի նշված նպատակը՝ նախ և առաջ (և դա անտարակույս ամենազիշավորն է) հարկ է երիտասարդությանը մտածել սովորեցնել:

«Մտածել սովորեցնել» կարգախոսը նշանակում է, որ մաթեմատիկայի ուսուցիչը ոչ միայն տեղեկատվության աղբյուր պետք է ծառայի, այլ պարտավոր է շանալ նաև այդ տեղեկատվության օգտագործմանն ուղղված՝ սովորողների ընդունակությունները գարգացնել, նա իր աշակերտների մոտ պետք է աճեցնի մտածելու կարողություն, դրան վերաբերող ունակություններ, ինչիրի որոշակի կերտվածք: Հնարսւվոր է՝ այդ նպատակն ավելի մանրամասն լուսաբանման կարիք ունի (դասավանդման հարցերին նվիրված իմ բոլոր տպագիր աշխատությունները կարող են նման լուսաբանում դիտվել): Այստեղ սակայն բավական է միայն երկու հանգամանք շեշտել:

Ես համարում եմ, որ միջին դպրոցում մաթեմատիկայի դասընթացի կարևորագույն նպատակներից մեկը սովորողների մոտ խնդիրներ լուծելու կարողություն գարգացնելն է:

Երկրորդ՝ մաթեմատիկական մտածողությունը չի կարելի գուտ «ձևական» համարել, այն խարսխված չէ միայն արխիտմների, սահմանումների և խիստ ապացույցների վրա, այլ բացի դրանցից շատ ուրիշ բաններ է նաև ներգրավում, քննարկված դիարերի ընդհանրացում, համանմանության օգտագործում, մի ինչ-որ կոնկրետ իրադրության մեջ մաթեմատիկական բովանդակության հայտարերում կամ զատում: Մաթեմատիկական մտածողական գործընթացները շատ հարմար առիթներ ունի՝ ծանոթացնելու իր աշակերտներին մտածողական գործընթացի այդ չափազանց կարևոր «ոչ ձևական» շրջաններին, և ինձ թվում է, թե նման առիթները նա պետք է որ ավելի լայն, շատ ավելի լայն օգտագործեր, քան դա անում է ներկայումս: Այդ նույն միտքը հակիրճ, թեև ոչ լրիվ տեսրով արտահայտելով՝ կարելի է ասել՝ հարկավոր է բոլոր միջոցներով սովորեցնել ապացույցելու արվեստը՝ միաժամանակ չմոռանալով նաև կոահելու արվեստի մասին:

3. Դասավանդումն արվեստ է

Դասավանդումն, ակներևորեն, շատ ընդհանրություններ ունի թատերական արվեստի հետ: Դիցուք՝ պահանջվում է ցուցադրել ձեր դասարանին մի ապացույց, որը հիանալի գիտեք, քանզի բազմից այն շարադրել եք անցած տարիներին այդ նույն առարկան վարելիս: Իհարկե, այդ ապացույցը ձեզ այլևս չի կարող հետաքրքրել, բայց խնդրում եմ դասարանին դա ցույց մի՝ տվեք, եթե դասարանը նկատի, որ ձեզ համար

դա ձանձրալի է, ապա այն իսկույն տաղտկալի կդառնա նաև բոլորի համար: Զեռնամուխ լինելով ապացույցին՝ աշխատեք հետաքրքրված երևալ, ապացույցի ընթացքում ձեռքից բաց մի՛ թողեք հետաքրքրից զաղափարների վրա սովորողների ուշադրությունն ուղղելու հնարավորագույնը: Ասրացույցու ավարտելով՝ աշխատեք փոքր-ինչ զարմացած թվալ և սովորողներին հնարավորություն տվեք նկատելու ձեր բարձր տրամադրությունը: Դուք պետք է մի փոքրիկ ներկայացում տաք այն սովորողների շահերից դրդված, որոնց քննարկվող հարցի նկատմամբ ձեր վերաբերմունքը կարող է ավելին ընձեռել, քան դրա բուն էռությունը:

Դասավանդումը (թեև դա պակաս նկատելի է) նաև երաժշտության հետ ինչ-որ ընդհանուր բան ունի: Դուք, իհարկե, զիտեք, որ ուսուցիչը հաճախակի տտիպված է լինում միևնույն առարկայի մասին խոսել ոչ թե մեկ կամ երկու, այլ երեք, չորս, հինգ անգամ... Սակայն միևնույն ասելիքի բազմաթիվ անգամներ, առանց ընդհատման և առանց ձայնի ելևէջի փոփոխման կրկնությունը կարող է ունկնդրին վանել պատմած նյութից և դրանով իսկ վնաս հասցնել այն նախատելին, հանուն որի կրկնվում եք: Սովորե՛ք երգահաններից, թե ինչպես դա ավելի լավ անել: Կարևորագույն երաժշտական ձևերից մեկն է «թեման տարափոխումներով (վարիացիաներով)»: Մանկավարժություն փոխադրելով այդ երաժշտական ձևը՝ սկսեք ձեր ասելիքի շարադրանքից՝ դրա պարզագույն տեսքով, երկրորդ անգամ կրկնեք այն մի փոքր փոփոխությամբ, երրորդ անգամ նոր, ավելի վառ երանցներ ավելացրեք և այլն: Ավարտելով՝ կարող եք վերադառնալ սկզբնական պարզ ձևակերպմանը: Մեկ այլ, կարևոր երաժշտական ձև է «ռոնդոն»: Մանկավարժություն փոխադրելով նաև այդ երաժշտական ձևը՝ ձեր հիմնական միտքը կրկնում եք մի քանի անգամ՝ փոքրիկ փոփոխություններով կամ բոլորովին առանց փոփոխությունների, սակայն միաժամանակ ներառնում եք կրկնումների միջև համապատասխան կերպով ընտրած ցուցադրական նյութը: Հուսով եմ, որ հաջորդ անգամ Բեթհովենի թեման տարափոխումներով (վարիացիաներով) կամ Մոցարտի ռոնդոն լսելիս՝ փոքր-ինչ կմտածեք նաև դասավանդման մեթոդիկայի առեղծների մասին...

Ժամանակ առ ժամանակ դասավանդումը կարող է մոտենալ բանաստեղծական արվեստին, իսկ երեմն՝ անպատկառությանը (ցիսիզմին): Ինձ համար վերացարկումները լավ են, բայց բոլոր միջոցներն օգտագործեք այդ վերացարկումներն ավելի շոշափելի դարձնելու: Ձեր վերացական կառուցվածքները պարզեցնելու համար թող ոչինչ չթվա չափազանց լավ կամ չափազանց վատ, չափազանց բանաստեղծական կամ չափազանց ցածր: Մոնտենն ասել է. «Ճշմարտությունն այնքան մեծ բան է, որ ոչինչ չպետք է արհամարհենք, ինչը ճշմարտությանն է հասցնում»: Հետևապես, եթե նրբազզացությունը ձեզ թելադրում է, որ տեղին է դասարանի առջև մի քիչ բանաստեղծ կամ մի փոքր անպատկան (ցիսիկ) ոլոտիկերանով, ոման հրամարիվիք դրանից՝ սիսոլ հասկացվող զսպլածությունից դրդված:

4. Ուսուցման երեք փուլեր

Ուսուցիչը պետք է ծանոթ լինի, թե ինչպես է ընթանում ուսումնասիրման գործընթացը: Նա պետք է խուսափի զիտելիքների ձեռքբերման անարդյունավետ

Ճանապարհներից և օգտագործի արդյունավետ եղանակների առավելությունները: Այդ նստառակոյի նու հաջողությամբ կարող է օգտագործել այն երեք սկզբունքները, որոնք հենց նոր դիտարկեցինք, այսինքն՝ եռանդուն ուսումնասիրման սկզբունքը, լավագույն շարժադրի սկզբունքը և հաջորդական փուլերի սկզբունքը, ուսումնասիրման նշանակած երեք սկզբունքները միաժամանակ նաև ուսուցման երեք սկզբունքներն են: Սակայն այստեղ պետք է հաշվի առնել մի անհրաժեշտ պայման, որպեսզի այս սկզբունքներից օգտագործել պահի, ուսուցիչը դրանց պիտի ծանոթ լինի ոչ միայն լսածի հիման վրա, նա պետք է խորապես վերապրի դրանք իր անձնական, լավ իմաստավորված փորձով:

1. Եռանդուն ուսումնասիրում

Այն, ինչ պատմում է ուսուցիչը դասարանում, իհարկե, կարևոր է, քայլ հազար անգամ ավելի կարևոր է այն, ինչ մտածում են սովորողները: Գաղափարները պետք է տարմատվորվեն սովորողների մոտքում, իսկ ուսուցչի դերն այս գործընթացում կարելի է համեմատել մանկաբարձութու դերի հետ: Սա է Սովորածեսի դասական խրատը և դրան ամենից լավ համապատասխանող ուսուցման ձևը սովորածեսյան երկխոսությունն է: Դպրոցական ուսուցիչը որոշակի առավելություն ունի բուհական դասախոսի նկատմամբ, քանի որ շատ ավելի լայնորեն կարող է կիրարկել երկխոսության ձևը: Քայլ, ցանքով սրտի, միջին դպրոցում ևս որոշակի նյութ անցնելու համար հատկացվող ժամանակը խիստ սահմանափակ է, այնպես որ երկխոսության ձևով ողջ դասը վարելն անհնար է: Սակայն մեր հին սկզբունքն ուժի մեջ է՝ թողեք հենց իրենց՝ սովորողներին՝ հայտնաբերել տվյալ հանգամանքներում առավելագույն հնարավորը:

Ես համոզված եմ, որ այդ տորումով կարելի է անել շատ ավելին, քան սովորաբար արվում է: Թույլ տվեք ձեզ հանձնարարել մի փոքրիկ հնարք. սովորողներին հնարավորություն ընձեռեք մասնակցելու այն խնդրի կազմմանը, որը նրանք պետք է լուծեն: Եթե սովորողներն իրենց ավանդն են ներդրել խնդրի առաջադրելուն, ապա նրանք շատ ավելի եռանդուն կաշխատեն վերջինիս լուծման վրա:

Նշեմ, որ գիտնականի աշխատանքում ևս խնդրի առաջադրումը կարող է հայտնագործության առավել արժեքավոր մասը լինել: Խնդրի լուծումը շատ հաճախ սպահանջում է պակաս ներթափանցում գործի էռության մեջ և մտածողության պակաս ինքնօրինակություն, քան խնդրի ձևակերպումը: Այսպիսով՝ սովորողներին հնարավորություն տալով իրենց ավանդը ներդրելու խնդրի նպատակահարմար պայմանը գտնելու մեջ, որով ոչ միայն դրդում եք նրանց տվելի հաստատություններին աշխատուելու, այլև նրանց մեջ մտածողության ցանկալի կերտվածք եք զարգացնում:

2. Լավագույն շարժադրիք

Ուսուցիչը պետք է իրեն համարի մի հանձնակատար, որը ցանկանում է պատանյակներին մի քիչ մաթեմատիկա «վաճառել»: Քայլ եթե հանձնակատարը իրացման խնդրում դժվարություններ է կրում, և նրա ապրանքը դրած է մնում, որովհետև հաճախորդները իրաժարվում են այն գնելուց, ապա նաև չպետք է ամեն ինչում գնորդներին մեղադրի: Հիշեցե՛ք, որ գնորդը միշտ իրավացի

Ե՛սկզբունքորեն, իսկ երբեմն և՝ գործնականորեն: Երիտասարդիլ, որը հրաժարվում է մաթեմատիկա սովորելուց, գուցե և իրավացի է: Պարտադիր չէ, որ ձեր սովորողը ծովյլ կամ տխմար լինի՝ պարզապես նրան կարող է հետաքրքրել լրիվ այլ մի բան: Ախր աշխարհում այնքան ն հետաքրքրի բան կա: Եվ որպես ուսուցիչ, որպես գիտելիքներ մատակարարող՝ ձեր պարտքն է սովորողի մեջ հետաքրքրություն առաջացնել մաթեմատիկայի նկատմամբ, ցուցադրել նրան քննարկվող հարցի նրբագեղությունը և գեղեցկությունը, ստիպել նրան՝ հասկանալու, որ չի զηջա՝ ձեր առաջարկած խնդրի վրա ջանքեր թափելով:

Հետևապես՝ ուսուցիչը պետք է հատուկ ուշադրություն հատկացնի խնդրի ընտրությանը, դրա ձևակերպմանը և այն բանին, թե ինչպես վերջինս ավելի լավ մատուցի: Խնդիրը սկզբ է հիմաստայից տեսք ունենա ոչ միայն ուսուցչի, այլև սովորողի դիրքից: Ցանկալի է, որ այն կապված լինի սովորողների առօրյա փորձի հետ, լավ է նաև, եթե խնդրի առաջադրումը կապակցվում է որևէ կատակի, բառախաղի կամ փոքրիկ պարադոքսի հետ: Խնդիրը կարելի է նաև սկսել սովորողներին քաշ հայտնի մի փաստից, լավ է, եթե այն ընդունին ընդհանուր հետաքրքրություն կամ կիրառումների հնարավորություն ներկայացնող խնչ-որ բան պարունակի: Եթե կամենում ենք սովորողի ստեղծագործական ջանքերը խթանել, ապա պարտավոր ենք ինչ-որ հիմունքներ տալ նրան՝ ենթադրելու, որ նրա այդ ջանքերն ապարդյուն չեն կորչի:

Հատկապես սովորողի հետաքրքրությունն է նրա աշխատանքի լավագույն շարժադրթիթը: Սակայն կան նաև այլ շարժադրթիթներ, որոնք չափետք է արհամարել: Թույլ տվեք ձեզ մի փոքրիկ խորամանկություն խորհուրդ տալ: Նախիրան սովորողները ձևադրություն կատարելու համար առաջարկեք նրանց կոահել արդյունքը կամ նույնիսկ դրա մի խնչ-որ մասը: Որոշակի հիպոթեզ արտահայտած սովորողը դրանով իսկ իրեն կաշկանդում է՝ նրա հեղինակությունն ու սեփական արժանապատվության զգացումն ինչ-որ չափով այժմ կախված են գործի վախճանից, և նա անհամբեր ուզում է իմանալ՝ արդյունքը իր կոահումը ճիշտ կլինի, թե ոչ: Նա իր խնդրով և դասարանի աշխատանքով եռանդուն կերպով կետաքրքրվի, նա չի քնի և ուշադրությունն այլ բանի վրա չի շեղի:

Նշեմ, որ գիտնականի աշխատանքում ևս կոահումը համարյա միշտ նախորդում է ապացույցին: Այսպիսով՝ առաջարկելով սովորողներին կոահել արդյունքը՝ դուք դարձյալ ոչ միայն դրդում եք նրանց ավելի լարված աշխատելու, այլև նպաստում եք նրանց խելքի ցանկալի կերտվածքի կազմավորմանը:

3. Հաջորդական փուլեր

Մաթեմատիկայի դպրոցական դասագրքերի հիմնական թերությունն այն է, որ դրանցում պարունակվող խնդիրների հավաքածուն, սովորաբար, գրեթե բացառապես բաղկացած է քարացած նմուշներից: Քարացած օրինակը կիրառման նեղ շրջանով մի օրինակ է. այն որևէ կանոնի լուսաբանումն է և միայն այդ կանոնի կիրառման գործնականն է ապահովում: Նման քարացած օրինակները, հնարավոր են՝ օգտակար են և նույնիսկ անհրաժեշտ՝ դա ես չեմ ժխտում, սակայն այստեղ բացակայում են ուսուցման երկու կարևոր փուլեր՝

տիրապետելու գործում իրենց ճարտարությունը կատարելազործել. նույնիսկ նրանց որոշ հնարևավորություն էի ընձեռում՝ դասավանդման մեջ վարժվելու համար (ուսուցիչներին հանձնարարելով իրենց ընկերակիցների փոքրիկ խմբերում պարապմունքների անցկացումը):

2. Մեթոդիկան

Մաթեմատիկայի հարյուրավոր ուսուցիչների հետ շփումներիս փորձից այն տպավորությունն եմ ստացել, որ «մեթոդական» դասընթացները նրանք սովորաբար ընկալում են խանդավառություն չիշեցնող զգացմունքներով: Հենց այդպես են նրանք վերաբերվում ուսուցիչներ պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատությունների մաթեմատիկական բաժանմունքներում ընթերցվող մեթոդիկայի սովորական դասընթացներին: Մի ուսուցիչ, ում հետ ինձ հաջողվել էր անկեղծորեն մի փոքր զրուցել, այս առիթով արտահայտվեց ույսպէս: «Մաթեմատիկայի ոյարապմունքներին մեջ այնչափ կարգ՝ «բիֆշեք» են առաջարկում, որ ի վիճակի չենք «ծամելու», իսկ մեթոդիկայի դասընթացները կարելի է համեմատել պատուց ապուրի հետ, որտեղ առհասարակ ո՛չ մի պատառիկ միա չկա»:

Մեզ, իհարկե, անհրաժեշտ է սիրտ առնել և հրապարակավ քննարկել այն հարցը, թե հարկավոր են արդյոք մեթոդիկայի դասընթացներն ասլազա ուսուցիչներին: Թե դրանք ընդհանրապես անօգտակար են: Կարծում եմ՝ կարծիքների անկեղծ փոխանակությունն այդ առումով կտա ավելին, քան թե մշտական քրթմանցը:

Անտարակույս՝ բարդ հարցեր այստեղ շատ կան: Արդյո՞ք կարելի է ընդհանրապես դասավանդում սովորեցնել (ինչպես շատերն են մեզանից կարծում, դասավանդումն արվեստ է՝ իսկ կարելի է արդյո՞ք արվեստ ուսուցանել): Արդյո՞ք առհասարակ գոյություն ունի այնպիսի գիտաճուռ, ինչպիսին է մաթեմատիկայի մեթոդիկան (այն, ինչն ուսուցիչը հաղորդում է իր սովորողներին ո՛չ մի դեպքում ավելի լավ չէ այն բանից, ինչը բովանդակվում է հենց իր մեջ, դասավանդումը կախված է ուսուցչի անհատական հատկություններից, և ուսուցման լավ մեթոդներ ճիշտ այնքան կան, որքան աշխարհում լավ ուսուցիչներ): Ուսուցչի նախապատրաստմանը հատկացվող ժամանակը բաժանվում է մաթեմատիկայի դասընթացների, մեթոդիկայի ժամանակը բաժանվում է մաթեմատիկայի դասընթացների, մեթոդական դասընթացների և գործնական պարապմունքների միջև, գուցե մեթոդական բովանդակությամբ դասընթացներին հարկավոր է ավելի քիչ ժամանակ հատկացնել: Ես կարող եմ խոսել միայն իմ անձնական փորձի մասին, և դրված հարցերից զիսավորի պատասխանն ինձ հայտնի է՝ մեթոդիկայի դասընթացներին օգտակար եմ համարում այն ամենը, ինչն այստեղ շարադրել եմ, այդպիսի դասընթացի կառուցման մի փորձ է կամ ավելի շուտ՝ մի քանի թեմաների ուրվագիր, որոնք պետք է մտնեն մաթեմատիկայի ուսուցիչների համար նախատեսված մեթոդիկայի դասընթացի մեջ՝ ըստ համոզմունքիս: Բոլոր դասընթացները, որոնք ընթերցել եմ մաթեմատիկայի ուսուցիչներին, այնպես էին կառուցված, որ ինչ-որ չափով նաև մեթոդիկայի դասընթացներ լինեին: Դասընթացի անվանման մեջ սովորաբար մատնանշվում էր միայն ուսումնական առարկան, որին նվիրվում էր այդ դասընթացը, իսկ հատկացվող ժամանակը բաշխվում էր մաթեմատիկայի և դրա դասավանդման

մեթոդիկայի միջև՝ հավանաբար, ողջ ժամանակի ինը տասներորդը ծախսվում էր առարկայի, և մեկ տասներորդը՝ մեթոդիկայի վրա: Ըստ հնարավորության դասընթացը կառուցվում էր երկխոսության ձևով: Որոշ մեթոդական դիտողություններ (իմ կամ սովորողների) միջադեպային բնույթ ունեին, սակայն կարևոր փաստի արտածումը կամ խնդրի լուծումը համարյա միշտ ավարտվում էին հարցի մեթոդական տեսանկյունի քննարկմամբ: «Արդյո՞ք կարող եք դա կիրառել ձեր դասարանական պարապմունքներին, - հարցնում էի լսարանին: - Ծրագրի ո՞ր կետն է նման կիրառում թույլ տալիս: Ինչի՞ վրա է հարկավոր հատուկ ուշադրություն դարձնել: Ինչպես ս կփորձեիք դա շարադրել դասարանին»: Նման տեսակի հարցեր (պատշաճ տեսքով ձևակերպված) կանոնավոր կերպով ընդգրկվում էին նաև քննական տոմսերում: Սակայն իմ զիմաստիր հոգուն էր ուսուցիչուն գործընթացի այս կամ այն կրողմերը լուսաբանող խնդիրների ընտրությունը (այս զիմում դիտարկած երկու խնդիրների նման):

3. Պաշտոնական հանձնարարականները մեթոդիկայի դասընթացներն անվանում են «նախազերի և ծրագրերի ուսումնասիրման դասընթացներ» (cariculum-study courses) և այդ հարցում այնքան էլ պերճախոս չեն: Սակայն կարող եք այդտեղ մի խորհուրդ գտնել, որն ինձ հոյակապ է թվում (թեպետ այդ խորհուրդը դյուրին չէ հայտաբերել, այդ նպատակով հարկ կլինի երկարատև խորհուրդը դյուրին չէ հայտաբերել, այդ նպատակով հարկ կլինի երկարատև պարզաբանում, թե ինչի՞ է հավասար երկու անգամ երկուսը «Նախազերի և ծրագրերի ուսումնասիրման դասընթացներ» բաժնի վերջին դարձվածքը գուգադրելով «IV մակարդակի» համար հանձնարարականների հետ): Խորհուրդն այդ այսպիսին է՝ քոլեջի դասախոսը, ով մտադիր է մաթեմատիկայի մեթոդիկայի դասընթաց ընթերցել պետք է հենց մաթեմատիկա բավականաշափ լավ տիրապետի: Կցանկանայի նաև ավելացնել, որ նա նմանապես պետք է ունենա զիտահետազոտական աշխատանքի որոշակի փորձ, թեկուզ ամենահամեստ: Եթե նման փորձ նա չունի, ապա ինչպես ս կարող է իր ունկնդիրների մոտ խթանել այն, ինչն ապագա ուսուցչի կարևորագույն արժանիքներից մեկն է՝ ստեղծագործական հետազոտման ոգին:

Առաջարկում եմ կշռադատել մեր խոսակցությունից բխող հետևյալ առաջարկները՝ Մաթեմատիկական ընկերության «պաշտոնական հանձնարարականներին» ավելացնել հետևյալ երկու կետերը.

I. Մաթեմատիկայի ուսուցիչների նախադասությունը պետք է ներառնի համապատասխան մակարդակում ինքնուրույն («ստեղծագործական») աշխատանքի տարրեր՝ խնդիրների լուծման սեմինարի կամ որևէ այլ ձևով

II. Մեթոդիկայի դասընթացները պետք է սերտորեն կապված լինեն մաթեմատիկայի դասընթացների կամ գործնական դասավանդման հետ:

Գրականություն

- Ֆ. Դենկ, Վ. Հարթքոպֆ, Զ. Փոյս. Խմացաբանություն (Եվրիսթիկա) (գերմաներեն). «Der Mathematikunterricht» 10. 1964թ. , մաս 1-ին:

2. Զ. Փոյա. Իմացաբանական (Էվրիստիկ) դատողությունները թվերի տեսության մեջ (անգլերեն). «American Mathematical Monthly», 66. 1959թ.. . Էջը 375-384:
3. Զ. Փոյա. Արդո՞ք իմացաբանությունը (Էվրիստիկան) խելամիտ է որպես ուսումնասիրման առարկա (ֆրանսերեն). «La Methode dans les Sciences Modernes». 1958թ.. . Էջը 279-285:
4. Զ. Փոյա Մաթեմատիկայի դասավանդումն ու կենսածագումնաբանական (կենսագենետիկային) օրենքը (անգլերեն). «The Scientist Speculates», «I.J. Good» հրատ.. 1962թ.. Էջը 352-356:
5. Զ. Փոյա. Մաթեմատիկայի դասավանդումը Շվեյցարիայում (անգլերեն), « American Mathematical Monthly». 67. 1960թ.. Էջը 907-914:
6. Դինկին. Ե. Բ., Մոլշանով Ս. Ա., Շեղենտալ Ա. Լ. Մաթեմատիկական մրցույթներ թվաբանություն և հանրահաշիվ (ռուսերեն). «Նաուկա» հրատ.. Մոսկվա. 1970թ.:
7. Դինկին Ե. Բ., Ուսպենսկի Վ. Ա., Մաթեմատիկական զրույցներ (ռուսերեն). «Գոստեխիզդատ» հրատ.. Մոսկվա. 1952թ.:
8. Լակատոշ Ի. Ապացույցներ և հերքումներ (ռուսերեն). «Նաուկա» հրատ. Մոսկվա. 1967թ.:
9. Վիտտենբերգ Ա. Ի. Կրթությունը և մաթեմատիկան (գերմաներեն), Շտուտգարտ. 1963թ.:
10. Դուրիշ Ռ. Մաթեմատիկայի դասավանդումը (անգլերեն). Կյու Յորք. 1963թ.: